

**ՅԱՇԱՐ ՔԵՄԱԼԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Ժամանակակից թուրք արձակագիր Յաշար Քեմալի ստեղծագործությունները, բացի իրենց թեմատիկ և ժանրային ինքնատիպությունից, առանձնանում են լեզվառճական պատկերավորման հարուստ միջոցներով: Առհասարակ յուրաքանչյուր գրող ստեղծում է իր լեզվառճական արտահայտչամիջոցները, որոնք էլ արհասայտվում են համեմատություններով, վախաբերություններով, մակդիրներով, շարահյուսական ճկուն հնարքներով և այլն: Հենց այս լեզվական միջոցներով է ձևավորում գրողի լեզուն, որով էլ նա կերտում է իր սեփական գրական ոճը:

Հայ գրականության մեջ, օրինակ, անհնար է շվաթել Չարենցի և Տերյանի, Բակունցի և Թումանյանի ոճերը: Նրանք մշակել են յուրօրինակ լեզվառճական համակարգ, որով էլ միմյանցից տարբերվում են: Առաջին հերթին դրանք բառերն են, բառակապակցությունները, հետո արդեն նախադասություններն՝ իրենց իմաստային շարահյուսական կադապարներով:

Այդպես էլ թուրք գրականության մեջ Յաշար Քեմալե առանձնանում է իր ուրույն ոճով: Քեմալի ընտրած ոճը, պատկերավորման հնարանքները համահունչ են նրա գրական թեմատիկային: Նա այդ պատկերավորման միջոցներով կայտղանում է ընթերցողին տեղափոխել իր ստեղծած յուրահաստուկ կյուրիտային միջավայրը: Սույն հոդվածի շրջանակում կվորձենք մի քանի օրինակների վերլուծությամբ ցույց տալ գրողի արձակում տեղ գտած համեմատությունների դրսեորումները:

Նախ նշենք, որ լեզվաբանների բնութագրմամբ համեմատությունն այլաբանության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, գրողի ոճական հնար, որի կիրառման դեպքում որեէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի տպավորիչ է դառնում: Հեղինակն իր խոսքը ազդեցիկ դարձնելու համար առարկայի որեէ կողմը համադրում է արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման այլ

առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը:

Համեմատության մեջ սովորաբար ընդգծվում է նաև համեմատվող առարկաների ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը, և երկու հասկացությունների միջև ստեղծվում է փոխադարձ կապ: Համեմատությունները, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են հեղինակի (սոսուդի) վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ¹: Այլ կերպ՝ կարելի է ասել, որ ոճական այս հնարը երկու առարկաների կամ երևույթների համադրությունն է, որը կատարվում է նկարագրությունն ավելի վառ դարձնելու եամար: Համեմատության միջոցի կիրառումով հեղինակը երկու երևույթների միջև կապ է հաստատում և մեկի օգնությամբ բացատրում և բնութագրում է մյուսը²: Այն ընդգծում է երևույթի հատկանիշներից ամենաէականը: Համեմատությունը հիմնականում բաղկացած է երեք անդամից՝ *ա) առարկա, որը համեմատվում է, բ) առարկա, որի հետ համեմատվում է, գ) այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը*³:

Հաճախ համեմատության ժամանակ երևույթներն իրար կապող հատկանիշը կարող է չնշվել, եթե այն պարզ հասկացվում է: Ըստ Պ. Պոդոսյանի, համեմատությունը նաև «տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկա կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու, հավասարացնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում են առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու և պատակով: Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների և երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բանաստեղծական շնորհքի արգասիք էն, այլև իմացության արտահայտությունն»⁴:

¹ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2007, էջ 334:

² Է. Ջրբաշյան, Գրականության տեսություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1980, էջ 228:

³ Տե՛ս Է. Ջրբաշյան, նույն տեղում:

⁴ Պ. Պոդոսյան, Բայի եղանակների ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 281:

Հետաքրքիր է, որ ոճական այս հնարի միջոցով համեմատության մեջ է դիտվում անձն ու առարկան, կենդանական աշխարհի ու մարդու միջև գոյություն ունեցող չափորոշիչները: Սրանք իրենց հերթին գործածվում են առանց այլաբանական իմաստի: Համեմատական ձևերի մեջ են մտնում այն հատկանիշները, որոնք բնորոշ են թե՛ մարդկային էությանն ու կենդանական աշխարհին, հ թե՛ բնության երևույթներին: Եթե համեմատենք փոխաբերությունների և համեմատությունների միջև եղած տարանջատումը, ապա այն բավականին աննկատ է: Քերականագետները ևս այս հարցի մասին ունեն իրենց մտեցումները՝ իմաստային յուրօրինակ ձևակերպումներով:

Համեմատությունը եսն ոճական դարձույթ է և պատկերավորման մի միջոց է, որով համեմատում են երևույթները, և որտեղ չկա երևույթների՝ մեկը մյուսին չեզոքացնելու միտում: Ընդհակառակը, բաղադրիչներից ամեն մեկը պահպանում է իր հատկանիշը: Իսկ փոխաբերության մեջ միտքը գործածվում է այլաբերական իմաստով և ուրույն չափագանցության մի տեսակ է կազմում, այսինքն՝ փոխաբերվող մի կողմը, ըստ էության, բացակայում է և գոյություն չունի:

Եշտենք, որ ինչպես հայերենում, այնպես էլ թուրքերենում համեմատությունը երկանդամ է, պարունակում է և համեմատելիի, և համեմատյալի անունները: Հայերենում համեմատության անդամները կապվում են *ինչպես, որպես, նման, իբրև, կարծես, թե, ասես, պես, ոնց որ, հանց, զերթ* և այլ կապական բառերով: Թուրքերենում ևս համեմատություններն ավելի արտահայտիչ են դառնում, *gibi-նման, kadar-չափ, benzer-նման, daha-ավելի...քան* կապերի միջոցով և կապական բառերի միջոցով կազմվում են ածականի երկրորդ աստիճան: Հայերենում, ինչպես և թուրքերենում համեմատություններ ասելիս առաջին հերթին հասկանում ենք ածականի համեմատության աստճանները, որոնք լեզվական ծավալումներում ընդլայնվելով դառնում են պատկերավորման միջոցներ: Մակայն չի կարելի շփոթել բավականին լայն տարածում ունեցող համեմատական կառույցները գեղարվեստական համեմատություն բանադարձման հետ:

Հայերենում համեմատության կաղապարներն ավելի ճկուն են՝ որպես պատկերավորման միջոց: Առհասարակ եշտենք, որ

հայերենում լեզվի պատկերավորման միջոցներն իրենց կազմությամբ շատ ավելի բազմաշերտ են, քան թուրքերենում: Արդի հայերենում այս կարգի նախադասությունները գլխավորների հետ կապվում են՝ ինչպես, որպես, ոնց որ, քան թե շողկապներով և համարվում են ձևի կամ քանակի պարագա երկրորդական նախադասություններ⁵:

Վերոնշյալ տեսական մոտեցումներից էլ առանձնացնենք Յաշար Քեմալի ստեղծագործություններում տեղ գտած համեմատությունները՝ կատարելով դրանց լեզվաոճական քննություն:

Այսպես օրինակ՝ *“Her birisi ceyran gibi, ucan şahini gökte kapkan atlar. Kozarken kanat açır ucan atlar”*⁶. (*Երանցից ամեն մեկը ջերանի պես թռչող, բազեին երկնքում ծուղակ գցող ձիեր էին: Վազելու ժամանակ՝ թները բացելով թռչող ձիեր*): Այս նախադասության առաջին մասում հեղինակը կիրառել է զեղարվեստական համեմատության միջոցը, իսկ երկրորդ մասը փոխաբերություն է: Առաջին նախադասության մեջ ձիերին Քեմալը վերագրում է այնպիսի հատկանիշներ, որոնք միայն գրողին հատուկ երևակայության արդյունք կարող են լինել՝ բազեին երկնքում ծուղակ գցող ձիեր, վազելիս թները բացելով թռչող ձիեր: Քեմալի ստեղծագործություններում մեծ տեղ են զրավում նաև փոխաբերությունները: Արանց միջոցով գրողն ընթերցողին ներկայացնում իր երևակայական, հուզական աշխարհը: *“Kur bir at...Boynunu uzatmış, geniş burun delikleriyle kapının yer yer çatlamış tahtasını koklar gibiydi”*⁷ (Խայտագորշ մի ձի... Վիզը երկարած՝ լայն ռունգերով ասես հոտոտում էր դռան՝ տեղ-տեղ ճաքճքած տախտակը):

Քեմալի արձակում համեմատությունները հանդես են գալիս ինչպես կապական բառերով, այնպես էլ առանց դրանց: Հետաքրքրական է, որ Յաշար Քեմալի ոճին հատուկ են միննույն նախադասության մեջ համեմատության և փոխաբերության զուգահեռ գործածության ձևեր:

Որպես համեմատություն կարող ենք առանձնացնել հետևյալ նախադասությունը՝ *“Çınarların altından ince bir buğu gibi göğze*

⁵ Տե՛ս է. Ջրբաշյան, նույն տեղում:

⁶ Kemal Y. Uç Anadolu Efsanesi, Adam Yayınları, İstanbul, 2003, s. 23.

⁷ Kemal Y. Ağrı Dağı Efsanesi, İstanbul, 1976, Cem Yayın Evi, s. 9

yükselen ateşin dumanı kesildi”⁸. (Զինարենիների տակից բարակ մի գուրբը պես, երկինք բարձրացող կրակի ծուխը մարեց): Այստեղ բարակ մի գուրբը համեմատում է կրակի ծխի հետ, որն էլ ավելի պատկերավոր է դարձնում նախադասությունը:

Քեմալն իր համեմատությունները կազմում է հատկապես *gibi*, *kadar* բառերի միջոցով: “Usta bir av köpeği gibi izleri, bir tekini kaçırmadan, kokluyor”⁹. (*Վարժեցրած որսորդական շան նման հոտառում էր բողբոջները՝ առանց բացառության*): Վարժեցրած որսորդական շան հետ համեմատելով՝ հեղինակն ավելի է շեշտում հերոսի զգուշավորությունը: Բերենք մեկ այլ օրինակ՝ “Vasili çaldırması gibiydi. Ulan bu zalimi, bu kan içiciyi öldüremeyeceğim”¹⁰. (*Վասիլին խեղագարի պես էր: Տո, այս բռնապետին, այս արնախումբին, չեմ կարողանալու սպանել*): Այստեղ Վասիլիի վարքը Քեմալը համեմատում է *խեղագարի հետ, որից կարելի է սպասել ամեն ինչ*:

Մեկ այլ օրինակում՝ “Fırtına da birdenbire başladı. Çocukluğundan bu yana denizi, rüzgarları, fırtınaları avucunun içi gibi bilen Vasiliyi, fırtınanın böyle birdenbire başlaması her zaman şaşırtmıştı”¹¹. (*Փոթորիկն էլ հանարկածակի բարձրացավ: Մանկությունից ի վեր ծովը, քամիները, փոթորիկները ձեռքի արի պես (կամ՝ հինգ մատի պես) իմացող Վասիլին միշտ զարմացրել էր, որ վաթորիկը հանկարծակի է բարձրանում*): Այստեղ խոսվում է Վասիլիի կողմից տեղանքը և շրջակա բնությունը լավ իմանալու մասին: Հեղինակը որպեսզի ավելի շեշտի այդ փաստը, գործածել է ...ձեռքի արի պես (կամ՝ հինգ մատի պես) իմանալ ժողովրդական ասացվածքը: “Pişen balıklardan çıkan keskin, mis gibi bir koku almıştı ortalığı”¹². (*Շրջակայքում տարածվել էր եփվող ձկներից եկող սուր, հաճելի մի հոտ*): Այստեղ հեղինակը շրջապատում տարածված սուր, ախորժեղի հոտը համեմատել է եփվող ձկների բուրմունքի հետ, դրանով իսկ շեշտելով շրջապատի օդը: “Hepsi de çarktan çıkmış gibi mavi çakır, diye gülümsedi”¹³. *Ժպտաց բոլորն էլ կարծես անիվի*

⁸ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, İstanbul, Adam Yayınevi, 2004, s. 151.

⁹ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 152.

¹⁰ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 165.

¹¹ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 171.

¹² Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 172.

¹³ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 175.

տակից դուրս պրծածի պես թունդ կապտամոխրագույն էին: Այստեղ հերոսների արտաքինը համեմատվում է անիվների տակից դուրս պրծածների հետ, որպեսզի ստեղծվի համապատասխան մտապատկեր: Այս մեկ համեմատությամբ այնքան տպավորիչ է գրողը ներկայացնում նրանց, որ ակամա վերջիններս ուրվագծվում են իրենց զգգգված, ոչ մարդկային տեսքով:

“Vasili, tam dorukta koltuk gibi düzleşmiş, bir kayanın üstüne oturdu...”¹⁴. *Վասիլին նստեց ամենաբարձր ժայռաբեկորին, որը հղկվելով՝ նմանվել էր բազկաթռոյի:* Այստեղ Յաշար Քեմալը համեմատում է, թվում է թե խիստ տարբեր երկու առարկա՝ ժայռաբեկորը և բազկաթռոյը:

“Güneşin dünyanın ulu turuncu bir çiçek gibi açmasına tanıklık etti”¹⁵. *Ականատես դարձավ աշխարհի հսկայական նարնջագույն ծաղկի պես բացվող արևածագին:* Այս նախադասության մեջ հեղինակը, արհի դուրս գալը, համեմատում նարնջագույն ծաղկի բացվելու հետ: Նույն համեմատությունը հեղինակը կիրառում է նաև օրվա բացվելու հրաշափառ արարողությունը նկարագրելիս: “O kadar mutsuydu ki, bu turuncu bu çiçek gibi açmış dünyayı yaşamaktan başka hiçbir şey umurunda değildi”¹⁶. *Այնքան երջանիկ էր, որ այս հրագույն ծաղկի պես բացված աշխարհը վայելելուց բացի նրան ոչինչ չէր հետաքրքրում:* “Ben görmüşüm çok insan, Avdülvahap gibi çok yalancı insan.”¹⁷. *(Ես շատ մարդ եմ տեսել, Ավդուլվահարի պես շատ ստախոս մարդիկ):* “Var idi dedemin Selanikte bir sarayı, Osmanlı Padişahının Sarayı gibi kırk oda”¹⁸. Պապա Աալոեիկում մի պալատ ուներ, օսմանյան սուլթանի պալատի պես քառասուն սենյականոց:

Այս երկու նախադասության մեջ թեն կան համեմատություններ, սակայն սրանք գեղարվեստական ռճական հնարներ չեն, այլ սովորական համեմատական կառույցներ և այն չպետք է շփոթել գեղարվեստական դարձույթի հետ:

Որպես գեղարվեստական դարձույթ հավելեք հետևյալ նախադասությունները “Karıncalar bulutlar, akan mor kelebek kümeleri, kuş kümeleri gibi, sarı mavi turuncu sütbeyaz, adanın

¹⁴ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 176.

¹⁵ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 176.

¹⁶ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 176.

¹⁷ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 193.

¹⁸ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 193.

üstünden üçüyorlar”¹⁹. *(Մրջունների անպերը, սլացող մանուշա-
կազույն թիթեռների խմբերը, թռչունների երամների նման, դեղին,
կապույտ, նարնջագույն, կաթնագույն, կղզու վրայից էին թռչում):*
“Tetiğe bastı basacak üstünden bir mavi bulut gibi bir kelebek kümesi
geçti Poyrazın yüzü açıldı, aydınlandı, içi sevinçle doldu”²⁰. *(Արդեն
ուզում էր ձգանք սեղմել, նրա վրայից կապույտ անպի պես
թիթեռները թռան: Փոյրազի դեմքը լուսավորվեց, նրա հոգին
ուրախությամբ լցվեց):* Այս նախադասությամբ հեղինակն իր
հերոսի կույակ գործողությանը գուգահեռ նկարագրում է ճախրող
թիթեռներին, համեմատելով դրանք երկնքի կապույտի հետ, որը
հանգստության մեղմության խոյնուրդ ունի իր մեջ: Դրանով իսկ
ցույց է տալիս հեյոսի՝ Փոյրազի հոգեկան աշխարհի
վափոխությունը՝ մեղմանալը փափկելը, լուսավորվելը,
բարիանալը: Այսպիսի պատկերային համակարգ ստեղծելով
Քեմալը հիմնավորում է իր հերոսի մտայնության փոփոխությունը:
Մեկ այլ տեղ՝ “Ekmekler kurudu taş gibi oldu. Islatıp köze koyuyor,
yiyorum”²¹. *(Հացերը չորացել, քարի պես էին դարձել: Թացացնում
հետո մոխրի վրա եմ դնում ն ուտում):*

Մեկ այլ օրինակում Քեմալը գրում է.

“Baytar, elini uzattı, ölü gibi **cansezi** Poyrazın elini tuttu sıkı”²².
*(Անասնաբույժն իր ձեռքը երկարեց, դիակի պես անկենդան
Փոյրազի ձեռքը բռնեց, սեղմեց):*

Կառուցվածքային առումով նույն համեմատությանը գրողը
իմաստային մեկ այլ լուծում է տալիս: Այսպես՝ “Sesi ölümlük
döşesindeki bir kişinin sesi gibiydi”²³. *(Ձայնը մահվան մահճում
գտնվողի ձայնի նման էր):* Այսպիսի հնարանքով հեղինակը
բացահայտում է իր հերոսի հոգեկան վիճակը: Նկարագրությունեն
ավելի վառ արտահայտելու, պատկերավոր դարձնելու համար
Քեմալն ուժեղացնում է իր շեշտադրումները. “Poyraz onun
durumunu anladı, koluna girdi Selma Sami, can veren bir kus gibi ağzını
açıp açıp, kapatıyor, zorla soluk alıyordu”²⁴. *(Փոյրազը նրա վիճակը*

¹⁹ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 207.

²⁰ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 207.

²¹ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 211.

²² Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana, s. 215.

²³ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana s. 215.

²⁴ Kemal Y. Fırat Suyu Kan Akıyor, Baksana s. 216.

հասկացավ, Մելնա Մամիի թևը մտավ, նա շուկը փչող մի թռչնի պես բերանը բացուխույն էր անում՝ դժվարությամբ էր շնչում):

Մեկ այլ հատվածում Յաշար Քեմալը համեմատությունների կարծես մի շարք է ստեղծել. «Doktor Selman Saminin yüzü sapsarı kesildi, elleri titremeye başladı, ayağa kalktı yönünü kiliseye döndü, yürüdü. Sağ ayağı aksıyordu. Sirtında uzun bir asker kaputun vardı. Kaputun etekleri bacaklarına dolanıyor, onun aksaklığını biraz daha çoğaltıyordu. Pantolonu yepyeniydi. Utüsü de kılıç ağzı gibiydi, aynı kumaştan olup üstüne kalıp gibi oturmuş ceketinin mendil cebine ipekten ak bir mendil sokuluydu. Mavi benekli kravatını belki de bugün takmıştı. Kundurası, çorapları, gömleği de yepyeniydi. Poyraz da arkasından kalktı. Kilisenin önüne gelince Doktor durdu. Döndü Poyraza baktı, ona acı acı gülümsedi. Gülümsemesi bir çığlık gibi, diye içinden geçirdi Poyraz Musa, ağıt yakar, çığırırken gözleri yaş içinde kalmış kadınların gülümsemesi gibi»²⁵. *(Բժիշկ Մելնան Մամիի դեմքը դեփ-դեղին դարձավ, ձեռքերը սկսեցին դողալ, ոտքի կանգնեց, ուղղվեց եկեղեցու կողմը, վերադարձավ, քայլեց: Աջ ոտքը կաղում էր: Մեքքին մի երկար զինվորական շինել կար: Շինելի փեշերը ծնկներին էին հասնում, նրա կաղությունն ավելի էր ընդգծում: Շալվարը նոփ-նոր էր, որի արդուկված մասերը նմանվում էին դանակի սայրի, նույն կտորից ասես իր վրա կարած բաճկոնի գրպանից մետաքսե մի ձերմակ թաշկինակ էր դուրս ցցված: Կասպույտ պուտերով փողայր երևի այսօր էր կապել: Կռիկները, գուլպաները, վերնաշապիկն էլ նոփ-նոր էին: Փոյրազն էլ հետևից վեր կացավ: Եկեղեցու առջև գալուն պես Բժիշկը կանգնեց: Շրջվեց, Փոյրազին նայեց, նրան դատար-դատար ժպտաց: Ժպիտն էլ մի ճիչի պես, - ինքն իրեն մտածեց. Փոյրազ Մուսան, - որը կկապի ճչալու ժամանակ ժպտացող այն կանանց նման, ում այքերը չի էին թախծով):*

Ամփոփելով մեր այս աշխատանքը՝ նշենք, որ Յաշար Քեմալի խոսքում գերակշռում են համեմատությունները կենդանական աշխարհի, բնության երևույթների հետ: Նրա ստեղծագործությունները հարուստ են նաև ինքնաստեղծ, յուրօրինակ գեղարվեստական դարձույթներով, որոնք ավելի գունեղ և ինքատիպ են դարձնում գրողի լեզուն:

²⁵ Yaşar Kemal, Frat Suyu Kan Akıyor, s. 215.